ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*12 հունիսի 2013թ. N 33*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Համայնքի ավագանու օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Իջևան քաղաքային համայնքի 2013թ բյուջեում փոփոխություններ և ծախսերի նախահաշվում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին
2. Ֆրանսիայի Վալանս քաղաքից օգնության կարգով ստացած ավտոմեքենաների ձևակերպման և հատկացման մասին
3. „Քաունթերփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության և Իջևանի քաղաքապետարանի համատեղ ծրագրի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին
4. Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. Քաղաքապետարանի վարչական շենքում երկու նոր աշխատասենյակի կառուցման մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ | ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

*12 հունիսի 2013թ. N 34-Ն*

**1.ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Իջևան համայնքի 2013թ. բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել բյուջեի վարչական մասում կատարել վերաբաշխումներ 1900.0 հազար դրամ, 1196.0 հազար դրամ, երրորդ եռամսյակից տեղափոխել երկրորդ եռամսյակ:Ֆոնդային բյուջեում կատարել 12000.0 հազար դրամ վերաբաշխումներ: Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը բյուջեի վարչական մասում կատարել ծախսերի հոդվածային վերաբաշխումներ 1900.0 հազար դրամի, այդ թվում քաղաքապետարանի պահպանման ծախսերի 01.01.01.51. բաժնի 4111 հոդվածից կրճատել 1900.0 հազար դրամ, որի 300,0 հազար դրամ հատկացնել վերոնշյալ բաժնի 4234 հոդվածին, 360.0 հազար դրամ 4823 հոդվածին, 80.0 հազար դրամ 4215 հոդվածին, 300.0 հազար դրամ 4261 հոդվածին գույքի ձեռք բերման համար, 860.0 հազար դրամ մարզադպրոցի պահպանման ծախսերին: Բացի այդ „Իջևան քաղաքի կոմունալ ծառայություն՛՛ հիմնարկի պահպանման ծախսերի 05.01.01 բաժ-նի 4264 հոդվածի երրորդ եռամսյակի համար նախատեսված գումարից 1196.0 հազար դրամ տեղափոխել երկրորդ եռամսյակ:

Ֆոնդային բյուջեի 04.05.01 բաժնի 5112 հոդվածից կրճատել 2000.0 հազար դրամ 05.01.01 բաժնի 5121 հոդվածից 10000.0 դրամ, ընդամենը 12000 դրամ և հատկացնել 04.05.01 բաժնի 5113 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ | ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*12 հունիսի 2013թ. N 35*

## 2. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱԼԱՆՍ ՔԱՂԱՔԻՑ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՏԱՑԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Ֆրանսիայի Վալանս քաղաքից օգնության կարգով ստացած ,,Միլենիում" մակնիշի մաքրող, սրբող, լվացող փոշեկուլ, ,,Ռենո" մանկիշի վիրաբուժական ավտոմեքենաները, ,,Մերսեդես" մակնիշի ավտոբուսը անհաժեշտ է մուքագրել քաղաքապետարանի հաշվեկշիռ:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Ֆրանսիայի Վալանս քաղաքից օգնության կարգով ստացված ,,Միլենիում" մակնիշի մաքրող, սրբող, լվացող փոշեկուլ, ,,Ռենո" մակնիշի վիրաբուժական ավտոմեքենաները, ,,Մերսեդես" մակնիշի ավտոբուսը մուտքագրել քաղաքապետարանի հաշվեկշիռ:

2. Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը ,,Միլենիում" մակնիշի մաքրող, սրբող, լվացող փոշեկուլ ավտոմեքենան անհատույց հատկացնել համայնքի տարածքի սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման աշխատանքներն իրականացնող ,,Իջևան քաղաքի կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկին:

3.Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը ,,Ռենո" մակնիշի վիրաբուժական ավտոմեքենան Իջևան քաղաքի բնակչության սպասարկման նպատակով անհատույց հատկացնել ,,Իջևանի ԱԱՊԿ" ՓԲԸ-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ | ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*12 հունիսի 2013թ. N 36*

3. „ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ" ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ „Քաունթերփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության կողմից առաջարկություն է արվել Իջևան քաղաքի Ա. Մելիքբեկյան փողոցում գտնվող գունաերաժշտական շատրվանների և շրջակա տարածքի հիմնանորոգման ծրագրում կատարել փոփոխություններ, քանի որ ծրագրի նախահաշվային արժեքը կազմել է 26091.03 հազար դրամ: Համապատասխանաբար համայնքի ներդրումը կկազմի 12091.103 հազար դրամ:

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը Ա.Մելիքբեկյան փողոցում գտնվող գունաերաժշտական շատրվանների և շրջակա տարածքի հիմնանորոգման համար համայնքի 2013թ բյուջեից հատկացնել 12091.103 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ | ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*12 հունիսի 2013թ. N 37 Ա*

# 4. ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և 32-րդ հոդվածի 1-ին մասով, „Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Իջևանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

4. Ուժը կորցրած ճանաչել Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ դեկտեմբերի 28-ի „Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների, աշխատակիցների թվաքանակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին" N 73 Ա որոշումը՝ Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի մասով:

5. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ | ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

# ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 4 բաժիններից`

**Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

**Կառուցվածքային ստորաբաժանումներ**

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Ներքին աուդիտի բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*12 հունիսի 2013թ. N 38*

## 5.ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժշտություն է առաջացել քաղաքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում գտնվող աշխատասենյակը բաժանել երկու մասի և վերանորոգել: Այդ նպատակով ըստ նախահաշվի անհրաժեշտ է ֆոնդային բյուջեից հատկացնել 486826 դրամ:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը՝ քաղաքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում գտնվող աշխատասենյակը երկու մասի բաժանելու և վերանորոգելու մասին: Այդ նպատակով ֆոնդային բյուջեից հատկացնել 486826 դրամ: Ֆոնդային բյուջեի 04.05.01 բաժնի 5113 հոդվածից կրճատել 486826 դրամ և հատկացնել 01.01.51 բաժնի 5113 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 2

# ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 48

| ՀՀ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 265000 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 212000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական / | 2 ✓ | 184784 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 205757 |
| | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 171151 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 66656 |
| | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | Բաժնի պետ | 1 | 171151 |
| 9 | Գլխավոր մասնագետ | 1 | 151227 |
| 10 | Առաջատար մասնագետ | 1 | 119775 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 96680 |
| | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 171151 |
| 13 | Գլխավոր մասնագետ -ճարտարապետ | 1 | 151227 |
| 14 | Առաջատար մասնագետ | 2 | 119775 |
| 15 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 96680 |
| | *Առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկման բաժին* | | |
| 16 | Բաժնի պետ | 1 | 171151 |
| 17 | Գլխավոր մասնագետ | 1 | 151227 |
| 18 | Առաջատար մասնագետ | 1 | 119775 |
| 19 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 96680 |
| 20 | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 79358 |
| | *Ներքին աուդիտի բաժին* | | |
| 21 | Բաժնի պետ | 1 | 171151 |
| 22 | Առաջատար մասնագետ-աուդիտոր | 1 | 119775 |
| | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 23 | Գլխավոր մասնագետ | 4 | 151227 |
| 24 | Առաջատար մասնագետ | 3 | 119775 |
| 25 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 96680 |
| 26 | 2-րդ կարգի մասնագետ | 4 | 79358 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 27 | Քարտուղարուհի | 1 | 79358 |
| 28 | Խմբագիր | 1 | 92550 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 29 | Վարորդ | 1 | 48180 |
| 30 | Վարորդ | 1 | 119775 |
| 31 | Պարետ | 1 | 67811 |
| 32 | Էլեկտրիկ | 1 | 51644 |
| 33 | Հավաքարար | 1 | 63192 |
| | Ընդամենը | 48 | |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ